

Երևանի պետական համալսարանում գործող  
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (ԲԿԳԿ)  
իրավագիտության 001 մասնագիտական խորերդին  
հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

#### Կ Ա Ր Ծ Ի Ք

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՄՈՒ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑԻ

**ԺԲ.00.03 - Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առենորային (կոմերցիոն),  
միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության  
իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Կարեն Արտակի Մելիքսերյանի  
«Վենչուրային բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմինների  
համակարգը և պատասխանատվության առանձնահատկությունները Հայաստանի  
Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ**

Գիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար իրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը նվիրված է վենչուրային բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմինների համակարգին և պատասխանատվության առանձնահատկություններին, ինչը կարևոր նշանակություն ունի կորպորատիվ շրջանառության ժամանակակից միտումների և զարգացումների համակարգային ընկալման ձևավորման տեսանկյունից:

Ատենախոսը շեշտադրել է գործարարական գործունեություն իրականացնող ինչպես ռեզիդենտ, այնպես էլ ոչ ռեզիդենտ իրավաբանական ու ֆիզիկական անձանց և հատկապես վենչուրային ներդրողների կողմից Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ կատարելու համար անհրաժեշտ օրենսդրական երաշխիքներ ստեղծելու և այդկերպ հավելյալ ներդրումներ ներգրավելու անհրաժեշտությունը:

Ատենախոսության արդիականությունը հիմնավորելիս հեղինակը արձանագրել է, որ ներկայումս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

նախատեսված իրավաբանական անձանց կազմակերպահրավական ձևերը լիարժեքորեն չեն լուծում վենչուրային ներդրողների՝ ներառյալ՝ ստարտափային ընկերությունների մարտահրավերները, խնդիրները և չեն երաշխավորում նրանց իրավունքների և օրինական շահերի համարժեք պաշտպանությունը:

Ավելին, կատարված տնտեսագիտական հետազոտությունները վկայում են այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը ներդրումային գրավչության առումով ունի նվազ հետաքրքրություն, ինչը հավաստվում է նաև նրանով, որ ըստ «StartupBlink» ընկերության 2022թ. «Ստարտափ Էկոհամակարգերի գլոբալ համարվի» ցուցանիշների՝ Հայաստանը ստարտափ Էկոհամակարգերի վարկանիշային առյուսակում գրադեցնում է ընդամենը 60-րդ տեղը:

Նշվածով պայմանավորված՝ ատենախոսի կողմից առաջարկվել և հիմնավորվել է բաժնետիրական ընկերության նոր տեսակի՝ վենչուրային բաժնետիրական ընկերության ներդրման և օրենսդրական կարգավորման գաղափարը, ինչն ինքնին յուրովի գիտական մոտեցում է վենչուրային ներդրողների ներդրումների ներգրավման և պաշտպանության գործիքակազմերի առումով:

Նկատենք նաև, որ թեև ՀՀ-ում կան կորպորատիվ իրավահարաբերությունների տարատեսակ հարցերին նվիրված աշխատանքներ, սակայն սույն ատենախոսությունը առաջին և համապարփակ աշխատությունն է, որն անդրադառնում է վենչուրային ներդրողների մասնակցությամբ կորպորացիաներին և ձևակերպում է դրանք ներդնելու գաղափարը:

Ատենախոսության առջև դրված խնդիրների և նպատակների լուծման համատեքստում հեղինակն ուսումնասիրել է ոլորտի տեսական գրականությունը, ներպետական և օտարերկրյա մի շարք պետությունների օրենսդրությունը, դատական պրակտիկան՝ դրանով իսկ հարստացնելով աշխատանքը և ապահովելով տեսագործնական հենք առաջադրված տեսական ու պրակտիկ հարցերի կարգավորման համար:

Հեղինակին հաջողվել է ընդհանուր գիտական և մասնագիտական հատուկ մեթոդների համակցված կիրառմամբ վեր հանել վենչուրային ներդրողների մասնակցությամբ կորպորացիաների կառավարման համակարգի, դրանց կառավարման մարմինների, մասնակիցների, վենչուրային ներդրողների,

պատասխանատվության առանձնահատկությունները և ինքնատիպ առաջարկներ ներկայացնել խնդրո առարկայի կանոնակարգման ուղղությամբ:

Ըստ այդմ՝ հեղինակը նորովի մոտեցում է ցուցաբերել վենչուրային կապիտալի ներգրավմամբ գործող կորպորացիաների առնչությամբ, ներկայացրել է դրանց վերաբերյալ արտասահմանյան երկրներում առկա կարգավորումներն ու պրակտիկան ներպետական օրենսդրությամբ տեղայնացնելու և ներդաշնակեցնելու միջոցով օրենսդրությունը կատարելագործելու մի շարք տեսագործնական առաջարկություններ:

Ատենախոսության նյութը ներկայացված է հստակ և ամբողջական, աշխատանքը զրկած է մասնագիտական գրագետ լեզվով և ոճով, գիտական բարձր մակարդակով և տրամաբանական հաջորդականությամբ՝ հնարավորություն տալով խորապես ըմբռնել վենչուրային բաժնետիրական ընկերությունների հայեցակարգը:

Վերոնշյալով հանդերձ՝ կցանկանայինք ատենախոսի ուշադրությունը հրավիրել աշխատանքում նկատված առանձին հանգամանքների վրա, որոնք մեր զնահատմամբ՝ կարիք ունեն լրացուցիչ դիտարկման ու պարզաբանման:

#### Այսպես՝

1. Ատենախոսության 1-ին գլուխ 1.1. պարագրաֆում ատենախոսը վենչուրային բաժնետիրական ընկերությունների առանձնահատկությունները վերլուծելիս և դրանց ներդրման անհրաժեշտությունը հիմնավորելիս հղում է կատարել նաև ամերիկյան իրավահամակարգում կիրառվող C Corp, S Corp և LLC տեսակի կորպորացիաներին:

Այսուհետև, հեղինակի կողմից ներկայացվել են C Corp տեսակի կորպորացիաները և դրանք բնութագրական մի շարք հատկանիշները (սահամանափակ պատասխանատվությունը, մասնակիցների անսահմանափակ թիվը, վենչուրային ներդրողների մասնակցությունը, հատուկ արտոնյալ բաժնետոմսերը, տնտեսական և հսկողական իրավունքները և այլն), որոնց հիման վրա առաջարկվել է նշված տեսակի կորպորացիաների համանմանությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսել վենչուրային բաժնետիրական ընկերությունները:

Ըստ այդմ՝ հեղինակն աշխատության շրջանակներում բացահայտել է C Corp կորպորացիաները, սակայն S Corp և LLC կորպորացիաները և դրանց յուրահատկությունները մանրամասն չեն վերլուծվել և համեմատվել:

Այս առումով աշխատանքը կշահեր, եթե ատենախոսն անդրադարձ կատարեր նաև մյուս տեսակների՝ S Corp և LLC կորպորացիաներին, բացահայտեր, թե ինչ բնույթ և բովանդակություն ունեն այդ կորպորացիաները, ինչպես են միմյանց հետ հարաբերակցվում վկայակոչված երեք տեսակի կորպորացիաները, որոնք են դրանց տարբերությունները և նմանությունները, ինչ առանձնահատկություններ ունի դրանցից յուրաքանչյուրը:

Միաժամանակ, նպատակահարմար կլինիկ, որ ատենախոսը ներկայացներ, թե C Corp, S Corp և LLC կորպորացիաներից ինչու հենց՝ C Corp տեսակի կորպորացիաներին նման կորպորացիաներ պետք է ներդրվեն գործող օրենսդրությամբ և արդյոք դրանք համահունչ են ներկայումս կիրառելի իրավաբանական անձանց կազմակերպարավական ձևերին:

Չի բացառվում նաև այն, որ C Corp կորպորացիաների առանձնահատկությունները հնարավոր լինի նախատեսել նաև գործող կորպորատիվ օրենսդրությամբ, այդ թվում՝ բաժնետիրական օրենսդրության լրամշակման միջոցով:

2. Թեև ներկայացված աշխատանքը վերաբերում է վենչուրային ներդրողների մասնակցությամբ կորպորացիաներին և դրանց առանձնահատկություններին, ատենախոսն անդրադարձել է ոչ միայն վենչուրային բաժնետիրական ընկերություններին, այս սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերություններին, բանկային, վարկային և ապահովագրական գործունեություն իրականացնող կորպորացիաներին և կատարել է համեմատական վերլուծություններ:

Մասնավորապես, հեղինակը քննարկման առակա է դարձրել վերը նշված կորպորացիաներին բնորոշ հատկանիշները, վերաբերելի մասով դրանց ընդհանրությունները, նմանություններն ու տարբերությունները:

Այս դիտակետից, գտնում ենք, որ առավել նպատակահարմար կլինիկ, եթե հեղինակը ուսումնասիրության առարկա դարձներ միայն վենչուրային բաժնետիրական ընկերությունները, դրանց կառավարման համակարգին և պատասխանատվությանը վերաբերող առանձնահատկությունները և բնորոշ գծերը:

Նշենք նաև, որ հեղինակը, կատարելով բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ վերլուծություններ և եզրահանգումներ, ընդգծել է, որ այդպիսիք կարող են կիրառելի լինել ոչ միայն ընդհանուր, այլ նաև հատուկ՝ վենչուրային բաժնետիրական

ընկերությունների նկատմամբ այնքանով, որքան որ դրանք իրենց էությամբ կիրառելի են:

Այս պարագայում, կարծում ենք, աշխատանքը կշահեր, եթե շեշտադրվեին վենչուրային գլխավորապես բաժնետիրական ընկերություններին ներհատուկ, յուրօրինակ հատկանիշները՝ առանց անդրադառնալու ընդհանուր կարգավորումների իրավահամեմատական վերլուծությանը:

3. Աշխատանքի «Եզրահանգումներ» բաժնի 10-րդ կետում ատենախոսը նշել է, որ եզրահանգումների մաս է կազմում նաև հավելվածում ներկայացված «Վենչուրային բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ապա և հավելվածով ներկայացվել է այդ օրենքի նախագիծը:

Հավելվածում հեղինակը շարադրել և ձևակերպել է վենչուրային բաժնետիրական ընկերություններին, դրանց կառավարման մարմիններին, վենչուրային ներդրողներին, պատասխանատվությանը վերաբերող առանձնահատուկ իրավակարգավորումները՝ առաջարկելով դրանք ամբողջացնել նոր օրենքով:

Ներկայացված օրինագծի վերլուծությունից կարելի է բխեցնել, որ դրանով նախատեսված կարգավորումները որոշ դեպքերում նման են ընդհանուր տեսակի բաժնետիրական ընկերություններին, ուստի, մեր պատկերացմամբ, հնարավոր է նաև վենչուրային բաժնետիրական ընկերություններին հատուկ առանձնահատկությունները նախատեսել գործող օրենսդրությամբ՝ առանց հատուկ օրենքի ընդունման:

Կարծում ենք, որ հավելվածում արտացոլված օրենքի նախագծով առաջարկվող իրավադրույթները հնարավոր է ներդնել նաև բաժնետիրական օրենսդրության մեջ, ի մասնավորի՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու եղանակով:

Նկատառումների շարքն ավարտելով՝ ցանկանում ենք շեշտել, որ այդպիսիք ունեն բանավիճային բնույթ, դրանց առկայությունը չի ստվերում կատարված աշխատանքի արժանիքները, գիտականությունը և կարևորությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Կարեն Արտակի Մելիքսեթյանի կողմից իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Վենչուրային բաժնետիրական ընկերությունների կառավարման մարմինների

համակարգը և պատասխանատվության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 08.08.1997թ.-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին, և հեղինակն արժանի է ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովագրական իրավունք)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Ա.ՀԱՅՔԵԱՆՑ

10.10.2024թ.

«Ա. Հայկյանցի ստորագրության իսկությունը հաստատում էմ»  
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ՝  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Հ. ԽԱՉԻԿՅԱՆ

